

Մշակութային և Հասարակական
Երկշաբաթաբեր

Ջոյս

թուման 1800
Հայաստանում 320 դրամ



**ՈՒՄ Է ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՏՎԱՄԱՒՈՐԸ
ԻՐ ԽՄԲԱԿՅՈՒԹԵԱՆ, ԺՈՂՈՎՐԴԻՆ, ԻՐ ԽՂՃԻՆ, ...**



ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- 2 **Մշակոյթի օրւայ առիթով**
Ռ. Սաֆարեան
- 4 **Ալմինի նոր գիրքը՝ Խաղաղութիւնը**
կանաչ մարգերի
- 5 **Վարդան Օսկանեանի գործը**
շարունակում է
- 6 **Ամուսնութիւնը ըստ աւանդոյթի**
Հայաստանի Եգիպտոսի մօտ
Գայիանէ Մկրտչեան
- 16 **Իմ Մանկութեան միակ**
լուսանկարները
Նորվան
- 18 **Երեւանի պատերի գրաֆիտիները**
- 22 **Մարզանք**
Արման Տէր Ստեփանեան
- 24 **20 հետաքրքիր գիտելիքներ**



Պատգամաւորական Ժողով եւ կուսակցականութիւն

- 8 Փոքրամասնութիւնը ինչո՞ւ մասնակցի ՊԺ-ին
- 10 Կարէն Խանլարեան. մեր համայնքում հասունացել է բազմակուսակցութեան պահը
- 12 Մովսէս Բէշիշեան. Կուսակցութիւնների հիմնումը միայն հայրենի հողի վրայ
- 14 Ռոբերտ Մարմարեան. Պատգամաւորը պատասխանատու է ժողովրդին

Պ ա ր ս կ ե ր է ն ք ա ժ ի ն

2	Այս համարի հայերէն էջերում	մարմինների ընտրութիւններ Հայաստանում	11	Վտարանդին Ազատ Մաթեան	
3	Թեհրանի իրաւապահ ուժերի հրամանատարի այցը «Արարատ»	6	Հարցազրոյց Սոհամադ Ֆարհադ Զոլէյնիի հետ	12	Երկու նամակներ բանտից Փարաշանով
4	Անկախութեան խաթարո՞ւմ	8	Գիւմրիի նկարիչ՝ Յակոբ Անանիկեանը	14	«Սալիմ Խանի» տունը Ալվարոյ Թորոսեան
5	Ինքնավար				

<p>Հոյս Հասարակական-մշակութային երկշաբաթաթերթ</p> <p>Արտօճատը՝ Լեւոն Ահարոնեան</p> <p>Խմբագիր՝ Ռոբերթ Սաֆարեան</p>	<p>Խմբագրական կազմ՝ Լիա Խաչիկեան, Գարուն Սարգսեան, Արմինէ Մելիք-Իսրայելեան</p> <p>Գեղարւեստական ձեւաւորում՝ Լիա Խաչիկեան</p> <p>Գովազդ Անի Դելիչեան</p>	<p>Կայք Քաջիկ Սաֆարեան</p> <p>Մարզական Արման Տէր Ստեփանեան</p> <p>Բաժանորդագրութիւն Քաթրին Եաղուբի</p>	<p>Հասցէ՝ Թեհրան, Զազրոս պողոտայ, 35-րդ փողոց, համար 13, բնակարան 5</p> <p>Հեռախօս-հեռապատճեն՝ 88770658 88775656</p> <p>hooyes@inbox.com www.hooyes.com</p>
---	---	--	--

ՄՇԱԿՈՅԹԻ ՕՐԻԱՅ ԱՌԻԹՈՎ

ՕՏԱՐ ՄՇԱԿՈՅԹՆԵՐԻ ԻՐԱՅՈՒՄԸ ԿԸ ՆՊԱՍՏԻ ՅԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՉԱՐԳԱՑՄԱՆԸ

Ռոբերթ Սաֆարեան

Շաբաթ հոկտեմբերի 13-ը Անթիլիասի կաթողիկոսութեան կեդմից յայտարարել է հայ մշակոյթի եւ սուրբ թարգմանչաց օր: Իրանահայ միութիւններում եւ դպրոցներում եւս տօնում են այս առիթը, յաճախ միմեանց նմանող ձեռնարկներ կազմակերպելով: Այս ձեռնարկների բովանդակութիւնը համարեա ամբողջովին նախատեսելի է: Ելոյթներ մետրապ մաշտոցի, նրա աշակերտների եւ հինգերորդ դարում հայ մշակոյթի ծաղկման եւ թարգմանչական շարժման մասին, հայրենասիրական ասմունքներ՝ դպրոցների աշակերտների միջոցով, երգչախմբերի կատարումներ եւ նազպարեր: Ահա այսպէս ենք մենք մեծարում հայ մշակոյթը եւ ընդհանրապէս մշակոյթը: Ինչո՞ւ այսպիսի մեծարում այլեւս զրաւչութիւն չունի եւ այսպիսի ձեռնարկներով շատ քիչ բան ենք անում համայնքում մշակոյթի զարգացման ուղղութեամբ:

Սկսենք հէնց վերջին կէտից: Ինչո՞ւ միայն հայ մշակոյթ: Արդեօք կարելի է սիրել հայ մշակոյթը եւ գնահատել սեփական մշակոյթի արժէքները, առանց ճանաչելու, հասկանալու եւ գնահատելու մշակոյթը, ընդհանրապէս: Առանց իւրացնելու բանաստեղծական արւեստից հաճոյք տանելու ունակութիւնը, երիտասարդն ու պատանին ինչպէ՞ս կարող են հասկանել եւ գնահատել իրենց ազգային բանաստեղծութիւնը՝ Նարեկացու, Թումանեանի, Չարենցի, Տէրեանի եւ մեր միւս մեծ բանաստեղծների գործերը: Առանց գիտակցելու կերպարւեստի էութեանը եւ գնահատմանը վերաբերող

հարցերը, հնարաւոր չէ հասկանալ հայ միջնադարեան մանրանկարչութեան արժէքները: Մի խօսքով, առանց հասկանալու արւեստն ու մշակոյցը ընդհանրապէս, դժար թէ իրապէս հասկանանք ազգային արւեստի արժէքները: Մինչդեռ այս օրերին համարեա ոչ մի բառ այն մասին, թէ առհասարակ ինչ է մշակունակում մշակոյթ եւ արւեստ: Հանդուած են, որ մշակոյթի շաբաթայ ձեռնարկներում, մեծ տեղ

հայ մշակոյթը ոչ մի առնչութիւն չունի ժամանակակից արւեստի տեսակների՝ կինոյի, հեռուստատեսութեան, կոմիկսների, Իւթիւքի, եւ լուսանկարչութեան հետ: Կարծես մի անյաղթահրելի անջրպետ է բաժանում մերօրեայ մշակութային երեւոյթները եւ հայ մշակոյթը: Ի՞նչու մշակոյթի օրւայ ձեռնարկներում չի խօսուում կինոյի կամ ինտերնետի մասին: Եւ ոչ այնպայման հայկական կինոյի: Ինչու լուսան-



պիտի յատկացւի միջազգային արւեստի եւ մշակոյթին վերաբերող ծրագրերին, արւեստի նոր տեսակներին եւ մշակութային նոր երեւոյթներին: Դա կարող է օգնել մեր համայնքի անհատներին, գնահատել նաեւ ազգային մշակոյթի արժէքները: Երկրորդ. այս ձեռնարկներում բացակայում է ժամանակակից արդիական մշակոյթը: Այս ձեռնարկները այնպիսի տպաւորութիւն են ստեղծում, որ ասես հայ մշակոյթը վերաբերում է միայն հին բաներին՝ մանրանկարներին, զեղազրութեանը, եկեղեցական երգերին եւ ... ասես

կարչութիւնը արւեստ եւ մշակոյթի մասնիկ չի համարուում: Իսկ եթէ համարոււմ է միայն այն դէպքում, երբ դրա միւրը հէնց աւանդական հին բաները լինեն (այսինքն պարզապէս որպէս միջոց): Ի վերջոյ, հետաքրքիր է, որ հայ մշակոյթի օրւայ առիթը թարգմանչական շարժումն է: Քիչ ենք մտածում այս հարցի խորհրդի մասին: Ի՞նչ է մշակունակում թարգմանչական արւեստ: Թարգմանութիւնը միջոց է, օտար ժողովուրդների մշակութային հարստութիւնները տուեալ մշակոյթի մէջ փոխադրելու համար: Ասելով, որ հինգերորդ դարում հայ



ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ 15-ՐԴ ՆԱՏԱՇՐՋԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ 16 ՆՈՅԵՄԲԵՐ 2012

Ուրբաթ Նոյեմբերի 16-ին կայանալու են ԹՅԹ Պատգամաւորական ժողովի նոր շրջանի ընտրութիւնները: ԹՅԹ ՊԺ-ի 15-րդ շրջանում ընտրելու համար մրցակցել ցանկացող անձնաւորութիւնները սկսած Յոկտեմբերի 6-ից, 15 օր ժամանակ ունեն արձանագրելու ընտրութիւնների յատուկ կայքի (սայթի) միջոցով: Կայքի հասցէն հետեւեալն է. www.patgamavorakan15.com

Այս կայքում կարող էք նաեւ տեղեկութիւններ ձեռք բերել ընտրութիւնների ժամանակացոյցի, ՊԺ-ի կանոնագրութեան եւ յանձնախմբի աշխատանքների մասին:

ԹՅԹ 14-ՐԴ ՇՐՋԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ, ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԴԱՏԱՐԱՆ Է ՏԱՆԵԼՈՒ ԹՈՒՆԵԱՆԻ ՆԻԹԱԿԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸ

Հոկտեմբերի 3-ին, ԹՅԹ 14-րդ շրջանի ՊԺ-ի դիւանը հրապարակել է հետեւեալ հաղորդագրութիւնը.

«Թեհրանի հայոց թեմի Հաշտեմնիչ Մարմնի ներկայացրած զեկոյցի հիման վրայ Թուրքիայի Հայոց Դատարանի կողմից հիմնականում ընթացքում տեղի ունեցած նիւթական խախտումների վերաբերեալ կատարած քննութիւնները անցեալ մէկ տարւայ ընթացքում ցաւօք չարդիւնաւորուեցին: Անյաջողութեան պատճառը հանդիսացաւ այն որ օրւայ Շինարարական Մարմնի նախագահին ուղղուած համագործակցութեան բոլոր կոչերը չնդառաջուեցին եւ յիշեալը մինչեւ վերջ խուսափեց դէմ առ դէմ խօսելուց եւ երբեք չներկայացաւ հրաւիրուած նիստերին եւ բաւարարեց գրաւոր թերի բացատրութիւններ ուղարկելով:


Ազգային Իշխանութեան յարկի տակ հարցը լուծելու նախընտրանքով, Դիւանս փորձեց նաեւ «ներքին միջոցառումներ» եղանակով քննել եւ եզրակացութեան հասնել որը դարձեալ մերժեց յիշեալի կողմից:

Պատգամաւորական ժողովի 36-րդ նիստում կայացած որոշման հիման վրայ որպէս վերջին փորձ նախքան պետական դատարանի դիմելը, Սրբազան Հայրը եւս պահանջել է յիշեալից բացատրութիւններ, որոնք դարձեալ անբաւարար են եղել:

Ուստի աւարտած համարելով ներքին միջոցներով հարցի վերահասութեան գործընթացը, եւ նկատի ունենալով որ արդէն ամիսներ առաջ կատարել են նախաքայլերը հարցը դատարան ներկայացնելու համար, Թեհրանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդից պահանջել է անյապաղ սկսել դատական գործընթացը եւ արդիւնքից տեղեակ պահել Պատգամաւորական ժողովի Դիւանին:»



նատես: Այդ ձեռնարկներում միայն խօսուում է հայ մշակոյթի մասին. ասես մի բարձր պատ բաժանում է հայկականն ու ոչ-հայկականը: Եւ սա, յատկապէս ինտերնետի եւ հասարակական համացանցերի ժամանակաշրջանում, անտրամաբանական, անընդունելի եւ վնասակար է մեր մշակոյթի եւ արւեստի զարգացման համար: Մենք մեր մշակութային պատմութիւնից պիտի վերցնենք նրա ոգին, նրա ազատ մտտեցումը այլ մշակոյթներին, ոչ թէ փորձենք նոյնութեամբ կրկնել այն:



ԱԼՄԻՆԻ ՆՈՐ ԳԻՐՔԸ

Իրանահայ բանաստեղծ Ալմինը, բուն անունով Ալբերտ Մինասեան, ծնւել է 1952թ. Մայիսի 22-ին Թեհրանում:

Տարրական եւ միջնակարգ կրթութիւնը աւարտել է հայկական ու պարսկական դպրոցներում, ապա մասնակցել է հայերէնի մասնաւոր պարապմունքների:

Գրել է սկսել պատանի տարիքից: Նրա առաջին բանաստեղծութիւնները 1970-ին լոյս են տեսել «Ալիք պատանեկան» երկչաբաթաթերթում, ապա տպագրւել մի շարք գրական թերթերում ու ամսագրերում, ինչպէս «Ալիք», «Բագին», «Գրական թերթ», «Գարուն», «Աղբիւր» եւ այլն:

Ալմինը 35 տարի հայոց լեզու եւ գրականութիւն է դասաւանդել հայկական դպրոցներում, եւ երկու անգամ, Երեւանում, մասնակցել է ուսուցիչների վերապատրաստման դասընթացների:

Նա 1990-ին շահել է գրական մրցանակ: 2000 թւականին, գրական ու մանկավարժական գործունէութեան համար, պարգեւատրւել է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Ս.Մեսրոպ Մաշտոց» շքանշանով: Դրան հետո՛ւ եւ Արցախի Գրողների Միութեան անդամ է:



Ալմինը հրատարակել է հետեւեալ գրքերը.

«Տրոփիւններ», բանաստեղծութիւններ / 1976 թ.

«Լուսարբութիւն», բանաստեղծութիւններ / 1978 թ.

«Եւ եղել լոյս», բանաստեղծութիւններ / 1991 թ.

«Իմ մանկական գիրքը», բանաստեղծութիւններ / 2001 թ.

«Աստղացոլքեր», բանաստեղծութիւններ / 2004 թ.

«Դուք ինձ կը յիշէք», բանաստեղծութիւններ / 2007 թ.

«Անժամօթներիս», բանաստեղծութիւններ / 2009 թ.

« Խաղաղութիւնը կանաչ մարգերի», բանաստեղծութիւններ / 2012 թ.

ՈՉ ՎԵՐՋԻՆԸ

Ամէն առաւօտ
Երբ լեռներից ու ծովերից
Ծագում է
Այս աղջիկը ոսկեվարս՝
Ես զգում եմ
Արդարութիւնն արեգակի:

Ամէն առաւօտ
Երբ բացում եմ առքերս,
Նա
Դիմաւորում է ինձ
Իր ոսկեշող մազերով
Ու ես տենչում եմ,
Որ սա վերջինը չլինի՝ ...

Ամէն առաւօտ
Երբ մտապատկերումս
Յայտնւում ես դու՝
Քո ծանօթ աչքերով
Ու ժպիտով հարազատ
Եւ նուրբ ձեռքերով քո,-
Որոնք լոյս են բուրում,-
Յարդարում ես վարսերդ ծփանուտ՝
Ես զգում եմ համը կեանքի
Ու բոյրը լուսոյ առաւօտի
Ու արդար արեգակի շողագոյնը...

Մի արեւ աղջիկ
Ինձ ծայն է տալիս
Ամէն առաւօտ,
Ու ես արթնանում-
Աղօթում եմ անբարբառ,
Որ սա վերջինը չլինի՝ ...

ՎԱՐՂԱՆ ՕՍԿԱՆԵԱՆԻ ԳՈՐԾԸ ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է



խմբակցության ղեկավար Ռուբեն Յակոբեանը, որն այսօր ԱԺ բրիֆինգների ժամանակ նաև նշեց, որ Վարդան Օսկանեանի հարցը դեռ շատ ջուր է վերցնելու. «Սա յստակ քաղաքական ենթատեքստ ունի. պետք է

Արմենպրեսի 6 Ջոկտեմբերի հաղորդման համաձայն, ՀՀ Ազգային ժողովի ԲՀԿ խմբակցության պատգամավոր, «Սիվիլիթաս» հիմնադրամի հիմնադիր Վարդան Օսկանեանը ծանուցագիր է ստացել՝ հոկտեմբերի 8-ին՝ ժամը 11:00-ին, ներկայանալ Ազգային անվտանգության ծառայքին՝ որպես մեղադրեալ առաջադրելու և հարցաքննելու համար: Այս մասին, Արմենպրես-ի հետ զրոյցում տեղեկացրին «Սիվիլիթաս» հիմնադրամից: Վարդան Օսկանեանի՝ ֆեյսբուքեան էջում կատարած գրառման համաձայն՝ ՀՀ ԱԱԾ քննչական վարչության պետի տեղակալ, փոխգնդապետ Համբարձումեանի ուղարկած ծանուցագրում նշված է. «Յայտնում են, որ ՀՀ քր. դատ. օրենքի 153 հոդվածի համաձայն նշանակված ժամկետին ներկայանալուն խոչնդոտող յարգելի պատճառների առկայության մասին դուք պարտավոր եք նախապես տեղեկ պահել քննությանը, հակառակ դեպքում կարող եք բերման ենթարկվել հարկադիր կարգով:

Հոկտեմբերի 2-ին Ազգային ժողովը բաւարարեց ԲՀԿ պատգամավոր Վարդան Օսկանեանին որպես մեղադրեալ ներգրաւելու մասին դատախազի միջնորդութիւնը: ԱԱԾ քննչական վարչութիւնը հանցաւոր ճանապարհով ստացւած առանձնապէս խոշոր չափերով եկամուտներն օրինականացնելու յատկանիշներով (փողերի լացում) քրեական գործ է յարուցել՝ ՀՀ ԲՕ 190-րդ յօդւածի 3-րդ մասի 1-ին կէտին համապատասխան:

«Մենք բոլորս Վարդան Օսկանյան ենք»
ԲՀԿ պատգամավոր Վարդան Օսկանյանն ընդամենը զոհ է ՀՀԿ-ԲՀԿ-ի՝ տարիներ շարունակ ձեւաւորւած խաղի կանոններին: Այս կարծիքին է «ժառանգութիւն»

շատ ուզեմալ, որ չտնեսնել այդ ենթատեքստը»: Իսկ ո՞վ է լինելու հաջորդ Վարդան Օսկանեանը հարցին, պարոն Հակոբեանը պատասխանեց. «Մենք բոլորս պոտենցիալ Վարդան Օսկանյաններ ենք»: Իսկ ՀՀԴ պատգամավոր Աղւան Վարդանեանը եւս այն կարծիքին էր, որ Վարդան Օսկանեանի նկատմամբ իրականացւած գործողութիւններում քաղաքական հետապնդման նշաններն ակնյայտ են. «Եթէ Վարդան Օսկանեանը չմտնէր քաղաքականութիւն, գլխաւոր դատախազը չէր մտնի խորհրդարան: Դրանից յետոյ ԱԺ մեծամասնութիւնն էլ, մեղմ ասած, լաւ վիճակում չէ»:

Ինչ վերաբերում է Վարդան Օսկանեանի վերաբերեալ Ռոբերտ Քոչարեանի մեկնաբանութիւններին, ապա ըստ Աղւան Վարդանեանի, այդ ամենը ղեկավարում է մէկ կենտրոնից: Պարոն Վարդանեանը համաձայն չէ ՀՀԿ խմբակցութեան ղեկավար Գալուստ Սահակեանի այն կարծիքի հետ, որ այդ մեկնաբանութիւնները ինքը Քոչարեանը չի արել: Դա այն եզակի դէպքն է, երբ Գալուստ Սահակեանը սխալուում է:

Վարդան Օսկանեանի ֆեյսբուքյան գրառումից
«Այս ոտնձգութիւնները ոչ թէ իմ՝ այլ Հայաստանի հեղինակութեան և մեր ժողովրդավարութեան նկատմամբ են: Այս նոր փուլում ուզում են շնորհակալութիւն յայտնել բոլոր այն մարդկանց, ովքեր միացել են ստորագրահաւաքին, կանխելու այս քաղաքական հալածանքը: Շատ զգացւած են տեսնել աշխարհի տարբեր երկրներից ստորագրահաւաքին միացածների սրտաբուխ և անկեղծ մեկնաբանութիւնները»:

Աղբիւր՝ Հայաստանի լրատւամիջոցներ



Ամուսնութիւն ըստ ականդոյթի

Հայաստանի եզդիները դեմ են կառավարութեան օրինագծին

Գայիանէ Սկրտչեան

Սև, թաւշայ մագերով ու նոյնքան սև փայլող աչքերով երիտասարդ կինը ծաղկաւոր սուրճի բաժակների մէջ զգուշօրէն տաք, սև սուրճ է լցնում: Օդում անհետացող մոխրագոյն գոլորշին մի պահ ծածկում է նրա տխուր, չխօսկան հայեացքը: Անխնամ ու ճաքճած ձեռքերը վկայում են ծանր կեանքի մասին:

Ես ու սկեսուրս ենք այդպէս որոշել, շարժել ենք աղաթով, փոքրա բայց տեցինք, ես էլ եմ ամուսնացել 15 տարեկանում, ի՞նչ անենք: Տեսանք, որ կարգին ընտանիքա, աղջկաս էլ ի՞նչ պէտք է ասերեն,- ասում է չորս երեխաների մայր՝ Սոնա Ասլոն, ով ապրում է Երևանից 80 կմ հեռավորութեան վրայ գտնուող Արագածոտնի մարզի Ռիա Թագա եզդիների գիւղում: 33-ամեայ Սոնան 2005 թականին ամուսնու մահից յետոյ Թբիլիսիից տեղափոխուում է սկեսուրի մօտ՝ գիւղ: Տան բակում հաւաքած ազգականները քննարկում են Սոնայի 14-ամեա աղջկա՝ Իլոնայի նշանադրութեան հարցերը: Վրաստանից ժամանած հորեղբայրը՝ 56-ամեայ Քեարամ Դարեշեանը, զարմացած ասում է. «Զգիտեմ ի՞նչ եմ մտածել, որ տւել են, երեխան մեղք էլ է: Գոնէ մի քանի տարի անցնէր, աչքը բացւէր»: Եզդի կանայք վաղ ամուսնանալը կապում են իրենց ազգային սովորոյթի հետ: Ռիա Թագայի գիւղապետ Ահմադ Բոյանն էլ ասում է, որ իրենց գիւղում այս պահին 20 տարեկան չամուսնացած աղջիկ չկայ, բոլորին տարել են: Ուզում ենք, որ մի քիչ մեծանան, բայց չկայ, անգամ տունը մնացած աղջիկ չկայ: Գիւղի ամենաջահէլ հարսը 16 տարեկան է, ամենաջահէլ աղջիկը, որ պատրաստուում է հարս դառնալ՝ 14 է,- ասում է Բոյաննը, աւելացնե-

լով, որ դեմ չեն յուլիսին ԴԴ կառավարութեան կողմից հաւանութեան արժանացած ընտանեկան օրէնսգրքում փոփոխութիւն կատարելու մասին օրինագծին, որով ամուսնութեան նւագագոյն շէմը սահմանւել է 18 տարեկանը նախկինում գործող 17-ի փոխարէն: Սակայն օրէնքի նախագծին դեմ էր արտայայտւել Աշխարհի եզդիների միութեան նախագահ Ազիզ Թամոյեանը, նշելով, որ եզդիների 60 հազարանոց համայնքը չի կարող ընդունել նման օրինագիծը, եզդի աղջիկները ամուսնանում են 15-16 տարեկանում, իսկ 18 տարեկան աղջիկը իրենց համար արդէն պառաւ է համարուում: Աւելի ուշ վարչապետ Տիգրան Սարգսեանը յայտարարեց, որ իրենք կը վերանայեն օրինագիծը, եթէ այն իսկապէս խաթարում է եզդիների բնականոն կեանքի կազմակերպման ընթացքը: Մինչդեռ օրինագծին կողմ են յատկապէս եզդի երիտասարդ կանայք, ովքեր վաղ հասակում են ամուսանցել ու սեփական մաշկի վրայ զգացել, թէ դա ի՞նչ է: 41-ամեայ Սեդա Միոյեանն ասում է, որ իր առողջական խնդիրների պատճառը վաղ ամուսնութիւնն էր: Շատ կանայք էլ յաճախ դժբախտանում են, բայց շարունակում են ապրել, չեն կարող բաժանւել: Միայն հօր անունի համար այդ քայլին չեն գնայ: Բաժանւած կնոջը նաև այլ աչքով են նայում,- ասում է Սեդան, ով ապրում է Թբիլիսիում, և հիւր է եկել հայրական տուն: Նա հինգ տարի իր մօտ է պահում քրոջը՝ Կարինային, և թույլ չի տալիս գալ Հայաստան, որպէսզի հայրը նրան շուտ չամուսնացնի: Մինչև 21 տարեկան պահեցի, յետոյ չթողեցին: Աղջիկս 14 տարեկան է, մինչև կրթութիւն չստանայ՝ չեմ

ամուսնացնի,- ասում է Սեդան: Եզդի տղամարդիկ էլ կարծում են, թե վաղ ամուսնությունների շնորհիվ է, որ իրենց մօտ չեն լինում ամուսնալուծություններ: 443 բնակիչ ունեցող Ռիա Թագայի գիւղապետի խօսքով՝ ընտանիքի գաղափարը ամուր է նստած եզդիների մէջ: Չեն յիշում մի դէպք, որ ասեն՝ էս ինչի ընտանիքը բաժանեց: Պարզապէս մեզ մօտ ամօթի զգացումն անելի բարձր է: Ո՞նց կասենք՝ էս ինչի աղջիկը բաժանել է, բա հօր պատի՞ւր, անո՞ւնը, ո՞նց կարայ տենց բան լինի- ասում է Բրոյեանը: 59-ամեայ Թառլան Չասոյեանի այտերը գիւղական արևից կարմրել ու շողշողում են: Սև, ամուր կապած գլխաշորով, ոսկե գնդիկաւոր ականջօղերով ու երկար սև զգեստով նա ամբողջացնում է եզդի կնոջ կերպարը: Խօսում է ինքնավստահ՝ տուրք տալով ազգային սովորոյթներին: Եզդի կնոջ կոչումն է՝ ամուսնանալ, լաւ կին, լաւ մայր դառնալ, ընտանիքի մասին հոգ տանել, կով կթել... Իսկ տղամարդուն պէտքա յարգել: Տղամարդը էն կողմից, որ գալիսա՝ պէտք ա հելնես կանգնես, տղամարդու հետ հաց չպէտքա ուտես, էդ ա յարգանքը,- ասում է նա, բողբոջելով միայն մէկ բանից, որ աղջիկներին կրթութեան չեն ուղարկում: Նրա թոռնուհին՝ 17-ամե-



www.armenianow.com

այ Լէյլան, ասում է, որ կտորելու է այդ կարծրատիպը ու դպրոցն անարտելուց յետոյ շարունակելու է ուսումը: Սերոնք համաձայն են: Կրթութիւնը անանդոյթից վեր են դասում: Վա՞տ կը լինի, որ եզդի կինը պաշտօնեայ դառնայ ու ներկայացնի նաեւ իր ազգի շահերը,- ասում է նա: Լէյլան միակն է Ռիա Թագայում, որ սովորում է անագ դպրոցում: Ընկերուհիները կիսատ են թողել ուսումը և, տանը նստած, սպասում են ապագայ փեսացուներին: 12 տարեկան չդարձած աղջիկներին ասում են՝ դու արդէն մեծ ես, տանից դուրս մի արի, երկար հագի, տեղ մի՛ գնայ, էս արա՛, էն արա՛: Ու փոխում են մտածողութիւնը: Աղջկան չեն թողնում այլ բանի մասին մտածել, բացի ամուսնութիւնիցէ- ասում է Լէյլան: Գիւղում չկան բարձրագոյն կրթութիւն ստացած կանայք: Երիտասարդ կանանց մէջ ներքին պայքար է գնում ազատութեան, սեփական իրաւունքներին տէր կանգելու համար: Սև մազերը ծոծրակին հաւաքած Ասիա Միոյեանը թափ է տալիս թաց ճերմակ սաւանները ու կախում պարանին: Դէմքը ողողած է միաժամանակ և՛ բողբոջով, և՛ ժպիտով: Ասում է՝ ամուսնացել է 16 տարեկանում, բայց պայքարելու է, որ իր աղջիկը գոնէ 20-ում ամուսնանայ: 15 տարի սկեսրայրիս առաջ հաց չեն կերել, նա ինձ չի տեսել հաց ուտելուց: Յետոյ բարձրաձայն չեն խօսել միայն շշուկով,- ասում է 36-ամեայ Ասիան: Ռիա Թագայում սպասում են Իլոնայի նշանադրութեանը: Իլոնայի քոյրը՝ 12-ամեայ Էլա Ասլոն, իր մօտալուս վտանգը զգալով, բարձրաձայն ասում է՝ Իլոնայի համար չեն տխրում, որ ինքն էլ չտխրի: Բայց չեն թողնի, որ ինձ այդքան շուտ ամուսնացնեն: Երազում են պարուհի դառնալ, ասում են՝ չեն ամուսնանալու,- ընդվզում է նա ու նրա «չէ»-ում մի ամբողջ յեղափոխութիւն է պարփակւած:

ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆԸ ԻՆՉՈ՞ՒՄ ԴԻՏԻ ՄԱՍՆԱԿՑԻ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

ԹՅԹ պատգամաւորական ժողովի ընտրութիւնները եւ դրա նիստերում հարցերի քննարկումն ու վաւերացումը բնականաբար կապւած են պատգամաւորների կուսակցական պատկանելութեան հարցին: Յաճախ են հնչում քննադատութիւններ ուղղւած Դաշնակցութեանը համակրող պատգամաւորներին: Նրանք մեղադրում են, որ կուսակցական շահերը գերադասում են ազգային կամ համայնքային ընդհանուր շահերին: Արդեօք կուսակցականութիւնը հակաժողովրդավարական գործոն է, թէ ընդհակառակը ժողովրդավարական համակարգի անհրաժեշտ մաս: Գուցէ կուսակցական պատկանելութեան հարցը միակուսակցական պայմաններում է, որ վերածւում է մեծաշնորհի եւ միապետութեան: Կամ հարցը գուցէ այն է, որ երբ մի կուսակցութեան յաջողում է ձեռք բերել մեծամասնութիւնը, ինչ մեխանիզմներ պիտի գործեն, որ փոքրամասնութեան մասնակցութիւնը չվերածի անիմաստ ներկայութեան: Ո՞րն է փոքրամասնութեան իրաւունքների տեղը մի ժողովրդավարական համակարգի մէջ եւ դրանք ինչքանով են առկայ մեզ մօտ:

Պատգամաւորական ժողովի եւ կուսակցականութեան փոխյարաբերութիւնը ուսումնասիրելու համար, մի քանի հարցով դիմել ենք Թեհրանի ՊԺ-ի մի քանի պատգամաւորների եւ այլ ազգային-հասարակական գործիչների եւ այս համարից սկսած լոյս ենք ընծայելու նրանց պատասխանները: Միաժամանակ հրաւիրում ենք բոլոր ազգային գործիչներին, ովքեր այս հարցերին կամ պատասխաններում արծարծւած նիւթերին վերաբերող կարծիքներ ունեն, դրանք արծագանքեն: «Յոյս»-ը սիրով բոլոր տեսակի կարծիքներ կը հրատարակի իր էջերում:

Ռ.Ս.



ԵՒ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ



ՊԱՏՉԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ «ՅՈՅՍ»-Ի ԷԶԵՐՈՒՄ

2011 թվականի Մարտին առաջին անգամ իրանահայ մամուլի ներկայցուցիչները մասնակցեցին Թեհրանի հայոց թեմի պատգամաւորական ժողովի նիստին: Այս երկուեկէս տարիների ընթացքում «Յոյս»-ը իր էջերում արտացոլել է մեկնաբանել է այդ նիստերի մեծամասնութեան անցուղարձը: ԹՅԹ ՊԺ-ի նիստերին քննարկած նիւթերի մասին տեղեկութիւններ ձեռք բերելու համար ընթերցողը կարող է դիմել մեր հետեւեալ համարներին: Այս նիւթերը հնարաւոր է կարդալ նաեւ մեր կայքում՝ www.hoos.com :

Համար 71

ՊԺ-ի 2010 թվականի մարտի 9-ի նիստի զեկուցում. պատգամաւորները պահանջում են թեմական խորհրդի կողմից տարեկան բիւջէի աւելի թափանցիկ ձեւ. առաջին անգամ լրագրողները ներկայ են գտնուում ՊԺ-ի նիստին:

Համար 83

2010 թվականի սեպտեմբերի 15-ի նիստի զեկույց

Համար 106

2011 թվականի սեպտեմբերի 6-7 նիստերի զեկույց

Համար 116

Իրանահայ համայնքի կառոյցը Ազատ Մաթեան

Համար 119

Նորտարւանից Նովուզ. ՊԺ-ի 2012 թվականի մարտի 6-ի նիստի զեկույց. Ուսուցիչների եւ առաջնորդարանի պատգամաւորականների մոր տեսակի պայմանագրերի եւ փոխհատուցման վճարման հարցը

Համար 127

2012 թվականի յուլիսի 10-11-17 նիստերի զեկույց. թեմական խորհրդի միամեայ գործունէութեան քննարկում. չփակած հաշիւների բացայայտում. համայնքը գոյատեւում է ծախսելով իր գոյքերը:

Կարէն Խակարեան. Իրանի իսլամական խորհրդա՝
Վիճա կարծում եմ, հասունացել է պահը մեր դրութեան որդեգրման համար



Շուտով Թեհրանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի նոր ընտրութիւններ են լինելու: Ո՞րն է այդ ընտրութիւնների կարեւորութիւնը: ՊԺ-ի որոշումները ի՞նչ ազդեցութիւն ունեն իրանահայ մարդու կեանքի վրայ:

ԹՅԹ Պատգամաւորական ժողովը մեր թեմի բարձրագոյն ժողովն է, որն ի զօրու է մեր համայնքի ազգային, կրթական եւ մշակութային ամենատարբեր բնագաւարներում ռազմավարական որոշումներ ընդունել, եւ միաժամանակ հսկել տուեալ որոշումների իրականացման գործընթացները: Հետեւաբար պատգամաւորական ժողովի գործունէութիւնն, ուղղակի եւ անուղղակի կերպով, առընչում է մեր համայնքի անդամների ազգային, հասարակական կեանքի ոլորտներին՝ դպրոցներից ու միութիւններից մինչեւ պսակադրութիւն, մկրտութիւն եւ այլն: Ահա այստեղ էլ կայանում է այս ժողովի նշանակութիւնն Իրանահայ մարդու կեանքում:

Արդէն երկար տարիներ է, որ դաշնակցական թեկնածուները մեծամասնութիւն են կազմում ՊԺ-ում եւ դա նշանակում է, որ ՊԺ-ում քւեարկող կարեւոր հարցերի մասին նախապէս որոշում է կայացւել այդ կուսակցութիւնում: Այս պայմաններում ոչ-դաշնակցական եւ անկախ թեկնածուները, ինչ դեր կարող են ունենալ ՊԺ-ում:

Պատ.- Ես ինձ համարում եմ ՀՀ Դաշնակցութեան գաղափարախօսութեան կրողը, հետեւաբար մեծ հպարտութեամբ եմ վերաբերում այն փաստին, որ ՀՀ Դաշնակցութեան համախոհները, տարիներ ի վեր, շահել եւ շահում են մեր համայնքի մեծամասնութեան վստահութեան քւէն: Այնուամենայնիւ մոյն այդ գաղափարական ակունքներից ելնելով, հաւատում եմ, որ որեւէ ոլորտում, յատկապէս օրէնսդիր ժողովում, փոքրամասնութեան առկայութիւնը կարող է հակակշռի նշանակութիւն ունենալ եւ քննադատա-



րանում իրանահայության ներկայացուցիչ համայնքում բազմակուսակցականության

կան դիտանկիւնով նպաստել որոշումների յղկման եւ բիրտեղացման գործին: Իսկ համախոհ մարդկանց խորհրդակցական եւ համադրական մեխանիզմը, որը սովորաբար ասոսացւում է ֆրակցիա հասկացութեան հետ, նոյնպէս փորձւած եւ նոյնիսկ պարտադիր պայման է օրէնսդիր ոլորտի արդիւնաւետ գործունէութեան համար: Գալով մեր իրականութեանը, պէտք է ասել, որ մեծամասնութեան ֆրակցիոնալ մտտեցումը բնաւ էլ տարրօրնակ երեւոյթ չէ: Տարրօրնակը՝ փոքրամասնութեան ֆրակցիայի բացակայութիւնն է, ինչին էլ, յուսամ, ականատես չենք լինի յառաջիկայ Պատ. ժողովում:

Ի՞նչ պիտի անել այլ խմբակցութիւնների եւ անկախ անձնաւորութիւնների մասնակցութիւնը համայնքի կառավարման գործերում խրախուսելու համար:
Համայնքի կառավարման, այսինքն ժողովրդին ծառայելու գործը, մեր ազգային իրականութեան մէջ, առանձին մի գրաւիչ կողմ չունի: Մարդիկ, տարիներ շարունակ, այդ կարգի գործերը կատարել են ինքնակամ մղումներով: Կարծում են, որ ամենայուսալի խրախուսանքը կայանում է՝ ժողովրդին ծառայելու նկրտական մթնոորտի առաւել ամրագրման մէջ, որի պայմաններում, ներքին կանչով եւ մղումներով շարժող գործիչները լաւապէս կ'ունենան ներքին հոգեկան բաւարարւածութեան զգացմունք:

Ինչո՞ւ մեր համայնքում բազմակուսակցութիւն չկայ:
Պատճառները, գերազանցապէս, պատմաքաղաքական արմատներ ունեն, որոնց կարելի է անդրադառնալ առանձնաբար: Սակայն, կարծում են, որ այդ պատճառների մի կարեւոր բաժինը գոյութիւն չունի այսօր: Ժողովրդավարական կատարեալ համակարգերի ձեւաւորման ուղին, ըստ իս, անցնում է «հանդուրժողականութեան», «բազմակարծութեան» եւ «բազմակուսակցականութեան» սկզբունքների իրականացման իրարաջող փուլերով: Մեր հասարակութեան, վերջին 20-ամեակին, պետական, ազգային եւ քաղաքական պայմանների մի քանի վիթխարի փոփոխութիւնների արդիւնքում, ականատես ենք եղել նշած հոլովոյթի սկզբնաւորմանը: Թերեւս կարելի է ասել, որ 1997-98 թւականներից սկսել է «հանդուրժողականութեան» շրջանը, 2000 թւականի առաջին տարիներից, երբ մեր Թեմի գործադիր մարմիններին անդամակցեցին այլախոհ գործիչները, սկիզբ դրեց «բազմակարծութեան» շրջանին, իսկ հիմա կարծում են, հասունացել է պահը՝ մեր համայնքում բազմակուսակցականութեան դրութեան որդեգրման համար: Չեն կարծում, որ ազգային որեւէ լուրջ գործիչ կասկածում է բազմակարծութեան եւ այլընտանիքային հայացքների դրական նշանակութեան մէջ: Բայց եւ այնպէս, կարծում են, որ գաղափարական եւ քաղա-

քական այլընտանիքային հայեացքների գոյութիւնն, ինքնին, չի կարող մեծ արդիւնքների յանգեցնել, եթէ չգոյանան համապատասխան կուսակցական կառուցները: Իսկ կուսակցութիւն հասկացութեան ընդհանուր շրջագծի մէջ եւ տեսնում են ե՛լ կառոյց, ե՛լ գաղափարախօսական դոկտրինա, ե՛լ քաղաքական ծրագիր, ե՛լ պաշտօնաթերթ, ե՛լ ամբողջական պատասխանատւութիւն կրող մարմին ու ժողով: Կը ցանկանայի որ, աւանդական գաղթօջախների օրինակով, մեր համայնքում էլ ներկայութիւն լինէին ազգային մի քանի կուսակցութիւն: Մեր աւանդական գաղթօջախներում միատեղ աշխատում են երեքը՝ ՍԴՀԿ-ը, որ մարքսիստական մտածողութեան ներկայացուցիչն է, ՀԶԴ-ն, որ դեմոկրատական սոցիալիզմի կրողն է եւ Սոցիալիստիկ անդամ, եւ ՌԱԿ-ը, որ ազատական (բայց ոչ նեոլիբերալ) գաղափարների հետեւորդն է: Միատեղ աշխատում են նրաք, չեն խանգարում իրար, յաճախ համախմբւում են ազգային հիմնահարցերի շուրջ, եւ ամենաեականը՝ հայ քաղաքացուն տալիս են այլընտրանքային հայացքներ որդեգրելու եւ ըստ այնմ կողմորոշւելու հնարաւորութիւն:

ԹՅԹ ՊԺ-ի Վերջին շրջանում, մամուլի ներկայացուցիչները մասնակցում էին նիստերին: Ի՞նչպէս էք գնահատում այդ մասնակցութեան արդիւնքները:
Շատ լաւ եւ արդիւնաւետ են գտնում մամուլի ներկայացուցիչների մասնակցութիւնը Պատ. ժողովի նիստերին: Ձանգւածային լրատւական միջոցների համակարգային ճշմարիտ ձեւաւորման ուղին, իր նախնական շրջաններում, անցնում է «Դեղին մամուլ» հասկացութեան ընդմիջից: «Դեղին մամուլ» ասելով, եւ հասկանում են սկանդալային նիւթերով ողողած թերթերն ու կայքէջները, որոնք իրենց ընթերցողներին, քաղաքական եւ հասարակական միտք տալու փոխարէն, նրանց մատուցում են մակերեսային տեղեկատւութիւն: Բարեբախտաբար, վերջերս մեր իրականութեան մէջ, որոշ տեղաշարժ են նկատում «Դեղին մամուլ»-ի դրութիւնը թոթափելու ուղղութեամբ: Ես «Ալիք»-ի մշտական ընթերցողներից եմ, ոչ լոկ այն պատճառով, որ «Ալիք»-ն 81 ամեայ անցեալ ունի, կամ ոչ սոսկ այն պատճառով, որ նա իրանահայ կեանքի միակ օրաթերթն է: Այլ այն պատճառով, որ «Ալիք»-ն ունենալով 81 ամեայ պատկառելի փորձ եւ գիտակցելով իրանահայ միակ օրաթերթ լինելու իր պատասխանատու հանգամանքն, օրեկտիւօրէն է մատուցում լուրերը եւ խորքային, անաչառ վերլուծութիւններ տալիս ազգային, քաղաքական եւ հասարակական իրադարձութիւնների մասին: Ես նաեւ մեծ հաճոյքով եմ ընթերցում «Յոյս»-ը, որ իր տարաբնոյթ նիւթերով եւ ինքնուրոյն վերլուծականներով, հարստացնում եւ ճոխացնում է մեր համայնքի զանգւածային լրատւութեան աշխարհը: Ի դէպ «Յոյս»-ն էլ իրանահայ միակ երկշաբաթաթերթն է, եւ որպէս այդպիսին, հետեւաբար, նրան եւս վերապահւած է լուրջ պատասխանատւութիւն եւ գիտակցական դեր մեր համայնքային հոգեմտաւոր կեանքում:

Կուսակցությունների հիմնումը եւ ներկայությունը արդարացում է միայն հայրենի հողի վրայ



Շուտով Թեհրանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի նոր ընտրութիւններ են լինելու: Ո՞րն է այդ ընտրութիւնների կարեւորութիւնը: ՊԺ-ի որոշումները ի՞նչ ազդեցութիւն ունեն իրանահայ մարդու կեանքի վրայ:

Պատգամաւորական ժողովը մեր համայնքի բարձրագոյն եւ օրէնսդիր մարմինն է, որտեղ կայանում են Թեհրանի հայոց թեմին վերաբերող կարեւորագոյն որոշումներ՝ թեմի առաջնորդ ընտրելուց եւ ազգային բիւջէի բաժանումից սկսած մինչեւ եկեղեցիների, դպրոցների եւ ազգապատկան այլ կառոյցների եւ կալվածների կառավարման վերաբերեալ ճշտող քաղաքականութիւն:

Ընտրութիւնների կարեւորութիւնը անմիջականօրէն կապակցուած են ՊԺ-ի համայնքային կեանքում ունեցած դերակատարութիւնից: Եթէ այդ մարմնի որոշումները եւ այդ որոշումներից բխած հետեւեանքները դրական լինեն, կունենանք ծաղկուն համայնք, եթէ բացասական լինեն՝ կունենանք դասալիք, յուսահատ, անտարբեր կամ պառակտուած համայնք:

Համայնքը առողջացնելու համար, պէտք է ձեւաւորել ՊԺ, որի անդամները յարաբերական առումով լինեն բանիմաց, մտային պաշարի տէր եւ երկխօսութիւն ունենալու ունակութիւն՝ մշակոյթ: Դա, իհարկէ, չի կայանալու մէկ օրով, բայց ապահովելու համար նման գործընթաց եւ ուղի, ՆԱԽԱՊԱՅՄԱՆ է, որ նախ եւ առաջ կայանան առողջ ընտրութիւններ: Համայնքում, կարելի է սերմանել, սէր, հանդուրժողականութիւն, համայնքային հարցերի նկատմամբ հետաքրքրութիւն, հոգատարութիւն եւ նւիրում, երբ ցանկութիւն եւ համապատասխան կամք դրսեւորւի առանց խտրականութիւնների եւ խախտումների արդար ընտրութիւններ կայացնել: Նման գործին վաղուց է կարօտում մեր համայնքը, որի սկսելու համար պէտք է ստեղծի հա-

մապատասխան մթնոլորտ: Այդ մթնոլորտի ձեւաւորման մէջ, համոզուած են, որ բարոյական մեծ ներդրում կարող է ունենալ թեմիս Առաջնորդը:

Մենք՝ բոլորս, որպէս համայնքի մասնիկ, որի կեանքի վրայ տարածում է ՊԺ-ի որոշումները պարտականութիւն ունենք, օժանդակել, սատարել, նման մթնոլորտի եւ գործընթացի կայացման համար: Նմանպէս պարտականութիւն ունենք մասնակցել այդ կառոյցի ընտրութիւններին եւ արտայայտել տեսակէտ:

Առանց առողջ ընտրութիւնների, ամեն ինչ լինելու է ձեւական եւ շարունակելու է հին ճահճացած իրադրութիւնը, վնասակար լարւածութիւնը եւ անհանդուրժողական մթնոլորտը: Հայութիւնը՝ ընդհանրապէս եւ Իրանահայութիւնը՝ յատկապէս, ոչ մի շահ չունեն պառակտումներից: Այլ բան է պառակտումը, ուրիշ բան տեսակէտների բազմազանութիւնն ու տարբերութիւնը:

Արդէն երկար տարիներ է, որ դաշնակցական թեկնածուները մեծամասնութիւն են կազմում ՊԺ-ում եւ դա նշանակում է, որ ՊԺ-ում քւեարկող կարեւոր հարցերի մասին նախապէս որոշում է կայացւել այդ կուսակցութիւնում: Այս պայմաններում ոչ-դաշնակցական եւ անկախ թեկնածուները, ինչ դեր կարող են ունենալ ՊԺ-ում:

Առողջ ընտրութիւնների արդիւնքում, արդիւնքները պէտք է յարգեն բոլորի կողմից, իսկ ՊԺ-ում ընտրուողները պէտք է լինեն առնւազն այնքան խոհեմ, որ գիտակցեն, որ ընտրելուց անմիջապէս յետոյ, իրենք այլեւս համայնքի եւ ոչ միայն իրենց ընտրազանգածի ներկայացուցիչներն են: Թէ ով որ կուսակցութեան անդամ է, կամ անկուսակցական է, դա սեփական նախասիրութեան եւ ընտրութեան իրաւունք է եւ էական հարցը եւ խոչընդոտը այդ չէ: Եւ թէ, ինչպէս նշում էք, «որ ՊԺ-ում քւեարկող կարեւոր հարցերի մասին նախապէս որոշում է կայացւել այդ կուսակցութիւնում», կցանկանայի հարցը ձեւակերպել հետեւեալ ձեւով: ՊԺ-ի օրէնսդրական հանգամանքները յարգելով, ՊԺ-ի ցանկացած անդամ կամ անդամներ կարող են խորհրդակցութիւններ կատարել միմեանց կամ համայնքի տարբեր հատուածների եւ անհատների հետ, դա ոչ միայն բացասական չի կարելի համարել, այլ առանց խորհրդակցութիւնների եւ մտքերի փոխանակման, ձեւաւորման եւ հիմնաւորման չի կարելի արդիւնաւէտ գործ կատարել:

Առիթից օգտւելով, ցանկանում են աւելացնել, որ երանի հասնենք այն իմաստութեան, որ ունենանք յանդուրժողութիւն եւ գիտակցութիւն, որ ՊԺ-ում կամ, եթէ կուզէք

կեանքի բոլոր ասպարեզներում, որոշումներ կայացնենք մեր իսկ սեփական խղճի և համոզման համաձայն, թեկուզ այդ որոշումը չհամընկնի սեփական կուսակցության այդ պահի ղեկավարության որոշումներին: Կուսակցությունների մեջ բազմակարծությունը հարստություն է: Կազմակերպական լծակներով տեսակետներ պարտադրելը, «կուսակցություն պահելը» վաղուց արդեն փաստել է իր անարդիւնաւետութիւնը եւ ամլութիւնը: Մտքի հզօրութիւնն է միաւոր ուժը եւ ոչ թէ կանոնագրական կախակայումները, սառեցումները, վտարումները եւ մասամբ նորին:

Ի՞նչ պիտի անել այլ խմբակցութիւնների եւ անկախ անձնաւորութիւնների մասնակցութիւնը համայնքի կառավարման գործերում խրախուսելու համար:

Նախ եւ առաջ բոլորի մէջ պիտի արմատաւորել այն միտքը, որ «խաչին ուժ տւողը Տէրն է», ասել է թէ՛ Եկեղեցին, դպրոցներն ու միութիւնները առանց ժողովրդի ներկայութեան իրենցից ոչինչ չեն ներկայացնում, ամայի շինութիւններ են, սառը հողից, քարից ու երկաթից շինած: Այդ կառոյցներին շունչ ու հոգի տւողը ժողովուրդն է: Ապա ժողովրդի մասնակցութիւնը ազգային կառոյցներում ապահովելու համար պիտի ճիշտ կիսել ժողովրդի հետ ու յետոյ էլ, ինչպէս ակնարկեցի, կայացնել Արդար ընտրութիւններ, ինչին հասնելու համար նախ եւ առաջ կարծում եմ պիտի իրականացւի պատգամաւորների արդար տեղաբաշխում ըստ բնակչութեան համեմատական թւի եւ երկրորդ՝ պահպանւի ընտրութիւններում մասնակից կողմերի հաւասար ներկայութիւնը՝ Կենտրոնական ընտրական յանձնախմբում, Ենթայանձնախմբերում եւ ընտրութիւնները իրականացնող բոլոր միւս մարմիններում:

Արդար ընտրութիւնների կայացումը ոչ միայն կաջակցի տարբեր անհատների եւ խմբաւորումների համայնքային կառոյցների նկատմամբ յարգալից վերաբերում ունենալուն, այլ հետզհետէ կապահովի համայնքային կառոյցներում նրանց ներգրաւմանը, համայնքային կեանքում առաւել կը խթանի կենսունակութիւն և ազգային գեղեցիկ միջավայր, ուր տարբեր տեսակետների տէր մարդիկ ոչ թէ ատում են միմեանց, այլ զրուցում եւ այդ զրոյցներին առընթեր միասնութեան եզրեր որոնում:

Ինչո՞ւ մեր համայնքում բազմակուսակցութիւն չկայ: Կարծում եմ սկզբում ճիշտ կլինի բացատրել, որ կուսակցութիւնների հիմնումը եւ ներկայութիւնը արդարացւում է միայն հայրենի հողի վրայ, քանզի ցանկացած կուսակցութեան ծննդեան բուն պատճառը եւ նպատակը իշխանութեան տէր կանգնելն է, ինչին հնարաւոր է հասնել միայն նոյն այդ կուսակցութեան ծնունդ տուող ժողովրդի բնօրրանում, մեր դէպքում՝

Հայաստանում: Հայկական կուսակցութիւնները հայրենի հողից դուրս լաւագոյն դէպքում վերածւում են հասարակական, բարեգործական կամ նման մի միութեան, իսկ վատի պարագային մաքիական ինչ-որ խմբի կամ ինչ-որ պետութեան կամ ուժի գործակալի: Այստեղ աւելի շուտ կարող է խօսք գնալ շարժումների ու զանազան մտքերի մասին, որոնց ներկայութեան պակասը ոչ միայն կապած է համայնքի հետ այլ նաեւ երկրում տիրող պայմանների:

Ինչ վերաբերում է մեր համայնքին. Այս հարցում, իհարկէ, մեղքի մեծ բաժին ունեն եւ ՀՅԴ-ն եւ հայկական «ծախակողմեան» կազմակերպութիւնները: Առաջինը նեղ կուսակցական շահեր հետապնդելու եւ մենատիրական իր ձգտումների, իսկ երկրորդը ազգայինը այսպէս կոչւած «համաշխարհային»-ին զոհելու հաշիւն:

Եթէ ընդունենք, որ ցանկացած կուսակցութեան ծննդեան բուն պատճառը եւ նպատակը իշխանութեան տիրանալն է, ապա հայկական սփիւռքում, այսինքն հայրենագրկութեան պայմաններում, կուսակցութիւններ հիմնելը և նման պայքար - հակապայքարներ շղթայազերծելը անիմաստ է դառնում: Իհարկէ, հայկական աւանդական կուսակցութիւնները, ստեղծել են այլ պայմաններում, այլ նպատակներ հետապնդելու եւ իրականացնելու համար, որ ոչ մի աղերս չունի իրենց այսօրւայ գործունէութեան հետ: Այդ փոփոխութիւնը, իհարկէ, մեծաւ մասամբ հայութեան պարտադրած քաղաքական իրավիճակների հետեւանքով է տեղի ունեցել, այլ խօսքով չի կատարել ինքնակամ հայկական կուսակցութիւնների կողմից, բայց և այնպէս իրողութիւն է:

Սփիւռքի քաղաքական թելադրանքը նախասիրութիւնների հարցեր չեն: Տեղասպանութեան և բռնագաղթի ենթարկւած հայութիւնը, եթէ դեռ չի հրաժարւել իր իրաւունքներից, ունի քաղաքական առաքելութիւն եւ միջազգայնօրէն արդարացւող եւ երաշխաւորող իրաւունքները: Դրան հասնելու համար, հայութիւնը պէտք է որակեալ ուժի վերածւի, որովհետեւ, աշխարհում տակաւին բնութեան օրէնքը գերակշռում է հասարակական օրէնքին: Սփիւռքի երկրորդ առաքելութիւնը Հայաստանի Հանրապետութեան սատարումն է՝ հզօր եւ ժողովրդավար պետութիւն հիմնելու համար, որ ամեն մի հայ հպարտանայ այդ մասին խօսելով:

ԹՅԹ ՊԺ-ի Վերջին շրջանում, մամուլի ներկայացուցիչները մասնակցում էին նիստերին: Ի՞նչպէս էք գնահատում այդ մասնակցութեան արդիւնքները: Մամուլի ներկայութիւնը ՊԺ-ում թեկուզ յապաղած, դրական քայլ է, սակայն արդիւնքների մասին խօսելը դեռ համարում եմ կանուխ, միայն կարելի է արձանագրել, որ այդ քայլով, ինչ-որ չափով լցւում է ժողովրդի եւ ազգային իշխանութեան միջեւ գոյութիւն ունեցող վիռը:

Ռոբերտ Մարգարեան. ՊԺ-ի դիւանի անդամ

Ընտրւած պատգամաւորը իրեն պատասխանատու է զգում ոչ թէ իրեն պաշտպանած միութեանն ու խմբաւորմանը, այլ ժողովրդին



Շուտով Թեհրանի հայոց թեմի Պատգամաւորական Ժողովի նոր ընտրութիւններ են լինելու: Ո՞րն է այդ ընտրութիւնների կարեւորութիւնը: ՊԺ-ի որոշումները ի՞նչ ազդեցութիւն ունեն իրանահայ մարդու կեանքի վրայ:

Համաձայն Թեհրանի հայոց թեմի կանոնադրութեան Պատգամաւորական ժողովը համարուում է թեմի բարձրագոյն մարմինը, որը ընտրուում է Թեմական խորհրդին, Կրօնական խորհրդին, Հաշտեքննիչ մարմնին, հաստատում է դրանցից բխող տարբեր մարմինների ու յանձնախմբերի կազմերը, վաւերացնում է տարեկան բիւջէն և վերահսկում է իր ընտրած մարմինների գործունէութիւնը և իւրաքանչիւրի գործունէութեան շրջանի աւարտին իր գնահատականն է տալիս նրանց բարոյական ու նիւթական գործունէութեանը: Կանոնադրութեամբ Պատգամաւորական ժողովին վերապահւած այս պատասխանատուութիւնները բաւարար են ընդգծելու համար դրա նշանակութիւնը: Պատգամաւորական ժողովը համարուում է նաեւ Հայոց Առաքելական Ս. Եկեղեցու ժողովրդավարական հիմքերի լաւագոյն դրսեւորումը, որի միջոցով հնարաւորութիւն է ստեղծուում թեմի ղեկավարման գործին ժողովրդի մասնակցութեան և դերակատարութեան համար: Միեւնոյն ժամանակ համաձայն չեն այն տեսակետին, որը Պատգամաւորական ժողովը նոյնացնում է տարբեր համակարգերում աշխատող օրէնսդիր մարմիններին եւ նրան ներկայացնում է, որպէս ,Թեմի

Օրէնսդիր-ը: Պատգամաւորական ժողովի և տարբեր համակարգերի օրէնսդիր մարմինների միջեւ ընդհանուր եզրեր փնտրելու ձգտումը տեղի է տալիս Պատգամաւորական ժողովից անտեղի ակնկալիքների, որոնց իրագործումը երբեմն ոչ միայն դուրս է գտնուում կանոնադրութեամբ յիշեալ ժողովի համար սահմանւած պարտականութիւնների ու լիազօրութիւնների սահմաններից, այլեւ կարող է խոչընդոտել միւս մարմինների, այդ թւում Թեմական խորհրդի, Կրօնական խորհրդի և Հաշտեքննիչ մարմնի գործունէութեան սահուն ընթացքը:

Արդէն երկար տարիներ է, որ դաշնակցական թեկնածուները մեծամասնութիւն են կազմում ՊԺ-ում եւ դա նշանակում է, որ ՊԺ-ում քւեարկւող կարեւոր հարցերի մասին նախապէս որոշում է կայացւել այդ կուսակցութիւնում: Այս պայմաններում ոչ-դաշնակցական եւ անկախ թեկնածուները, ինչ դեր կարող են ունենալ ՊԺ-ում:

Թեւ ընտրութիւնների սեմին համայնքում գործող միութիւնների կողմից ներկայացւում են պատգամաւորական ցանկեր, սակայն իրականութեան մէջ Պատգամաւորական ժողովի ընտրութիւնները անց են կացւում ոչ թէ համամասնական , այլ մեծամասնական կարգով: Այլ խօսքով ժողովուրդը քւեարկում է ոչ թէ հրապարակւած ցանկերին, որոնք ներկայացնում են ինչ-որ կուսակցութիւն, խմբաւորում կամ հոսանք, այլ ուղղակի իր ծայնը տալիս է ցանկացած թեկնածուին: Հետեւաբար ընտրւած պատգամաւորը իրեն պատասխանատու է զգում ոչ թէ իրենց պաշտպանած միութեանն ու խմբաւորմանը, այլ ժողովրդին, ինչը երաշխաւորում է նրա անկախութիւնը: Հակառակ այն սխալ ենթադրութեան, որ Պատգամաւորական ժողովը քւեարկում է այն հարցերի մասին, որոնց շուրջ նախապէս արդէն որոշում է կայացւել, Պատգամաւորական ժողովը աշխատում է ինքնուրոյն կերպով եւ տարբեր հարցերի ու խնդիրների մասին տալիս է իր սեփական գնահատականը: Բարեբախտաբար վերջին շրջանում Պատգամաւորական ժողովի նիստերին ներկայ գտնւած մամուլի ներկայացուցիչները կարող են վկայել, որ ժողովներում արծարծւած տարբեր հարցերի ու խնդիրների շուրջ բուռն քննարկումներ են ծաւալում երբեմն նոյն ցանկի միջոցով հովանաւորւած պատգամաւորների միջեւ եւ յանգում այնպիսի լուծումների, որոնք անպայմանօրէն չեն ներկայաց-

նում ցուցակը պաշտպանած միութեան կամ խմբաւորման տեսակէտն ու ցանկութիւնը:

Ի՞նչ պիտի անել այլ խմբակցութիւնների եւ անկախ անձնաւորութիւնների մասնակցութիւնը համայնքի կառավարման գործերում խրախուսելու համար:

Պատգամաւորական ժողովի ընտրութիւններին միշտ էլ մասնակցութեան հնարաւորութիւն են ունեցել անկախ և տարբեր խմբակցութիւնների հարող թեկնածուներ: Նախ պիտի շեշտել տարբեր թաղերի միութիւնների կողմից ներկայացուող ցանկերում գտնուող թեկնածուների մեծ մասը անկախ գաղափարներ ներկայացնող ճանաչւած ազգայիններ են, որոնք միշտ չէ, որ անդամակցում են որեւէ կուսակցութեան կամ միութեան: Միութեանկան ցուցակներով պաշտպանւած թեկնածուները բնականաբար ունեն քարոզչութեան ակտիւ լայն հնարաւորութիւն, բայց դա չի խանգարում միւս ազգայիններին ներկայացնելու իրենց թեկնածութիւնը և օգտւելու օրէնքով սահմանւած հնարաւորութիւններից: Օրինակ թաղային ենթայանձնաժողովները հաւասար պայմաններում ներկայացնում են բոլոր պատգամաւորներին և թաղի եկեղեցում կամ որեւէ այլ սրահում ժողովրդային հանդիպման ժամանակ քարոզչական հաւասար պայման են ստեղծում անկախ թեկնածուների համար: Նաեւ նկատի առնելով նախորդ շրջանի ընտրութիւններում՝ յատկապէս Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու շրջանում, անկախ թեկնածուների ծաւալած քարոզչական լայն գործունէութիւնը ու նաեւ շահած ձայները չի թւում, թէ նման անձանց կամ խմբակցութիւնների մասնակցութեան ճամբին կան արգելքներ, որոնց վերացնելով պիտի խրախուսել նրանց մասնակցութիւնը:

Ինչո՞ւ մեր համայնքում բազմակուսակցութիւն չկայ: Ելնելով Իրանի քաղաքական պայմաններից և գործող օրէնքներից բնականաբար իրանահայ համայնքում իրենց ցուցանակներով հանդէս չեն գալիս կուսակցութիւնները, բայց դա չի խանգարում, որպէսզի իրենց գործունէութիւնը ծաւալեն տարբեր կուսակցական գաղափարախօսութիւնների հաւատարիմ հաստատութիւններ, միութիւններ ու ՁԼՄ-ներ: Այսօր մեր համայնքում ԶՅԴ գաղափարախօսութիւնը ներկայացնող Ալիք հաստատութեան, տարբեր միութիւնների, Ալիք օրաթերթի ու Չայելի կայքէջի կողքին աշխատում են նաեւ այլ գաղափարախօսութիւնների ու տեսակէտների հետեւող շուրջ մէկ տասնեակի հասնող միութիւններ, խմբաւորումներ ու ՁԼՄ-ներ, ինչը պերճախօս վկայութիւնը կարող է լինել իրանահայ համայնքի իրական դիմագծի: Իսկ եթէ տարբեր ընտրութիւններում յաղթանակ են տանում ԶՅԴ-ին հարող միութիւնների պաշտպանած թեկնածուները եւ հետեւաբար յիշեալ միութիւնների թեկնածուները մեծամասնութիւն

են կազմում Պատգամաւորական ժողովում դա ոչ թէ միւս թեկնածուների համար քարոզչութեան ու գործունէութեան դաշտ գոյութիւն չունենալու, այլ ժողովրդից հաւաքած ձայների և նրանց ինչ-որ չափով ակտիւ գործունէութեան ու վայելած համակրանքի արդիւնքն է: (Ի դէպ պէտք է յիշեցնեն, որ Պատգամաւորական ժողովի ընտրութիւնների որոշ շրջաններում տարբեր թաղամասերում մեծամասնութեան պատկերը տարբեր է եղել: Օրինակ՝ 13-րդ շրջանում «Սրբոց Թարգմանչաց», իսկ 14-րդ շրջանում «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» եկեղեցու պատգամաւորների պատկերը, որը մէկ անգամ գալիս է հաստատելու, որ վերջին խօսքն ասում է ժողովրդի ձայնը:)

ԹՅԹ ՊԺ-ի Վերջին շրջանում, մամուլի ներկայացուցիչները մասնակցում էին նիստերին: Ի՞նչպէս էք գնահատում այդ մասնակցութեան արդիւնքները:

Պատգամաւորական ժողովի նիստերին մամուլի ներկայացուցիչների մասնակցութիւնը համարում են 14-րդ շրջանի Պատգամաւորական ժողովի կարևոր նաճումներից մէկը: Ժողովուրդը ընտրելով Պատգամաւորական ժողովը իրաւունք ունի տեղեկանալու նրա տարած աշխատանքների ու գործունէութեան, ինչպէս նաեւ նիստերի ընթացքի մասին: Տարիներ շարունակ Պատգամաւորական ժողովը ժողովրդին կապող կամուրջը պաշտօնական հաղորդագրութիւններն են եղել: 14-րդ Պատգամաւորական ժողովը որոշեց այդ դերակատարութիւնը վստահել ժողովրդի ներկայացուցիչը համարող մամուլին, հնարաւորութիւն տալով, որպէսզի մամուլը սոսկ լրատութիւն կատարելուց բացի նաեւ իր ցանկացած դիտանկիւնից նայի ներկայացուած հարցերին ու կատարւած քննարկումներին:

Այդ կապը ժողովրդին հնարաւորութիւն է տալիս հետեւելու իր ընտրած պատգամաւորների գործունէութեանը և հեշատացնում յաջորդ ընտրութիւններին իր վստահւած անձանց ընտրութիւնը: Միեւնոյն ժամանակ ցաւով պիտի արձանագրեն, որ չնայած նախկինում նիստերին մամուլի ներկայացուցիչների մասնակցութեան անհրաժեշտութեան մասին յաճախ հնչեցւած կոչերին, նման հնարաւորութիւն ստեղծելուց յետոյ միայն Ալիք օրաթերթի թղթակիցն է գրեթէ բոլոր նիստերին ներկայ եղել եւ յաճախ զգացել է քննադատի դերում հանդէս եկող մամուլի ներկայութեան բացակայությունը:

Իմ մանկութեան միակ լուսանկարները

Նորվան



1. 1963թ. Ղարադաղ գաւառի Քարագլուխ գիւղ, հորեղբորս աղջկայ հարսանիքը: Մօր գրկում գլուխը ծռած ամենափոքրիկը ես եմ: Իմիջայլոց, աջից երրորդը (նստած), հետագայում ինձ դասաւանդէ լու է Սահակեան դպրոցում՝ օր. ժեմիկը:



2. Մի քանի ամիս է ինչ Թեիրանում ենք, այստեղ բնակող մեծ քոյրս՝ Վարդուշը, ընտանիքի գաւակներին տարել է լուսանկարելու: Վալէնը դեռ չի ծնւել:

3. Շրջիկ լուսանկարիչը յաւերժացրել է պահը՝ Շամսաբադի երբեմնի ծառախիտ բլուրներում գքօսնելիս: Հանրահռչակ դերասանների՝ Ֆարդին-ին եւՄալեք Մոթի-ին նմանակելով բաճկոնս գցել են ուսիս, իսկ վեստերն Ֆիլմերի հերոսների նմանութեամբ աջ ձեռքովս ուզում են չեղած ատրճանակը պատեանից հանել ու կրակել: Վերադարձին վարար գետից անցնելիս կօշկիս թայը ջուրը տարաւ:



4. Սահակեան դպրոց, չորրորդ դասարան: Կենտրոնում ուսուցչական կազմի ներկայացուցիչներ՝ տկն. Շուշիկը (հայերէն էր դասաւանդում, երկար եղունգները միշտ վարդագոյն ներկած), տեսչուհին՝ տկն. Սեդա Պետրոսեանը եւ Պրն. Մեսրոպը՝ մարզանքի ու հաշւապահութեան դասատուն:



Շատ էի սիրում ներկայ լինել մի այլ ուսուցչուհու դասերին, որը կաշէ սել բաճկոն ու հագիւ ծնկներին հասնող փէշ էր հագնում ու ես շարունակ նստարանի տակ մատիտս էի փնտրում: Բոլորին յիշում են, աղջիկներն էին՝ ժամէնը, Ռուբինան, Ժուլիետը, Իսկուհին, Վազգանուշը, Քարմէնը, Ծաղիկը, իսկ տղաները՝ Հերոսը, Մայիսը, Սարօն, Ասլանը, Վազգէնը, Վահիկ Կոլոխը, Ռուբիկ Կատուն եւ միւսները: Այդ օրը դպրոցական խալաթս չէի հագել, ուստի հագքրեցին աւելի բարձր դասարանցու խալաթը, որը բաւականին մեծ էր ինձ վրայ: Տխրեցի, որովհետեւ սիրահարւած էի ու չէի ուզում սիրածս աղջիկն ինձ այդպէս տեսնել: Նա ժիր աշակերտուհիներից էր. աչքը մտնելու համար ծուլիկս աշխատատէր դարձաւ, բայց աչքին չերեւաց:

ԽՈՍՈՂ ՊԱՏԵՐԸ

Անանուններ

Դեռեւս 90-ականներին փողոցային արւեստը Երեւանում կիրառած առաջին համարձակների աշխատանքներից մի քանիսը դեռ պահպանւել են: Սակայն հանդիպել դրանց հեղինակներին մեզ այդպէս էլ չյաջողւեց: Փոխարէնը նոր սերնդի ներկայացուցիչ German-ի համար այդ վաղ շրջանի գրաֆիտիստները ներշնչանք են եղել, դարձեալ պատճառ մտածելու նոյնով զբաղւելու մասին: Յետոյ տարւել է գրաֆիտների մասին համակարգչային խաղով, որից յետոյ էլ հաւաքւել է N. M. E CREW սեփական խումբը (nimble minds employees՝ «ճկուն մտքի ծառայողները»):

Գրաֆիտիստները յաճախ աշխատում են խմբերով crew: N.M.E CREW-ի անդամները 4-ն են՝ German-ը, Smee-ն, Depth-ը, եւ Tyne-ը: Էլ ի՞նչ փողոցային արւեստի ներկայացուցիչ առանց իրեն իւրայատուկ, իսկական անունը քողարկող մականւան, որով պիտի ստորագրի ամէն նկարի տակ: Տղաները խոստովանում են, որ գրաֆիտի գրելու ամենագրաւիչ տարրերից մէկը հեղինակի անանունութիւնն է:

«Ջրօսնում ես քաղաքով, անցնում քո իսկ արած գործի կողքով, լսում ի՞նչ են խօսում ու քննարկում անցորդները երէկ գիշերը արած գործիդ մասին ու հաճոյքով արձանագրում, որ նրանց մտքներով անգամ չի անցնում, որ պատը նկարազարդողը դու ես», - ասում է German-ը:

Անոնին վարպետները վստահեցնում են, որ գրաֆիտն ոչ-աւանդական է իր ձեւաչափով, և ամենեւին էլ չի ենթադրում, որ այն չի կարող համարւել արւեստ: Պարզապէս այն չի տեղաւորւում ընդունւած ակադեմիական արւեստի սահմաններում: Գրաֆիտն դրանով զբաղողների բնորոշմամբ ազատութիւն է, զգացմունքների անսպասելի արտայայտում, հաղորդագրութիւն հասարակութեան համար, շփում նրա հետ: Այստեղ չկան նկարչական պարտադիր օրէնքներ, համաչափութեան կանոններ, ձեւաչափային ու տարածքային սահմանափակումներ: Ազատութեան զգացողութիւնն այնքան մեծ է, որ երբեմն հեղինակներն իրենք են սահմաններ գծում՝ չափի զգացողութիւնը չկորցնելու համար:

Սեւ Գիրք

Իւրաքանչիւր գրաֆիտի գրող ունի իր black book-ը՝ նօթատետր, որտեղ ծնւում են քաղաքի պատերի նկարազարդման առաջին էքզիզներն ու մտքերը: N.M.E Crew-ի անդամների «սեւ գրքում» նոր միտք կայ՝ Երեւանի պատերին թողնել հաղորդագրութիւններ, որոնք կը փոխեն անցորդի տրամադրութիւնը: Եթէ նախկինում գրաֆիտը գրում էին գեղեցկութեան, աչքին հաճելի պատկեր ստանալու համար կամ էլ նկարում խմբի կամ անդամներից որեւէ մէկի անունը, ապա հիմա N.M.E Crew-ն փնտրում է պատ նոր մտայղացման համար:

Նախագիծը ստացել է բազմանշանակ Smile՝ ժպիտ, վերնագիրը:

Կարելոյը՝ արագ վազել

Առաջին հայեացքից սովորական ու անհրապոյր թւացող գետնանցումի պատից կրկեսի սիրւած դերասան, ծաղրածու Լեւոնիդ Ենգիբարեանը ծաղիկ է նւիրում անցորդներին: Այս գրաֆիտն չ՞իմն է: չ՞ն չի ներկայանում, կրկին չկորցնելու համար գրաֆիտի գրողի ամենասիրելի առաւելութիւնը՝ անանունութիւնը: Ենգիբարեանի գրաֆիտը չ՞ի եզակի գործն է, որը չունի տեքստային հատւած, այն պարզապէս նւիրւած է յայտնի միմոսին: Իսկ առհասարակ չ՞ի կարծիքով գրաֆիտը պիտի իւրաքանչիւր անցորդին մտածելու տեղիք տայ: Քաղաքում ունեցած իր հինգ-վեց գրաֆիտներից ամենից շատ սիրում է Անտուան դեսնատ էքզիպերիի «Փոքրիկ իշխանը» վիպակի հանրայայտ գլխարկը, որն իրականում ոչ թէ գլխարկ էր, այլ փիղ կուլ տւած օձ:

չ՞-ն մենակ է աշխատում, իսկ գրաֆիտների թեմաներն իրենք իրենց են մտածում: Ժամանակի ընթացքում հասունանում է մի միտք, որը չ՞-ն ցանկանում է կիսել բոլորի հետ: Ընդ որում, եթէ այդպիսի միտք գլխում ծագում է, պիտի առաջիկայ հանգստեան օրերին այն գրի պատին, հակառակ դէպքում միտքը սառչում է, դառնում սովորական ու կորչում է այն պատին յանձնելու ցանկութիւնը: չ՞-ն երկար բարակ պատրաստում է տեղն ընտրելուն: Նախ՝ նրա գրեթէ բոլոր գոր-



Ժերը զեւոնանցումներում են՝ բաց տարածութեան մէջ հեղինակն իրեն վստահ չի զգում: Մի քանի օր ուսումնասիրում է, թէ ո՞ր ժամին ո՞վ է անցնում պատի մօտով, որտե՞ղ առաւել յարմար կը լինի գրել: «Եթէ գրաֆիտի գրող ես, պիտի նաեւ լաւ վազել կարողանաս, քանի որ ցանկացած պահի կարող են քեզ նկատել



ու միակ ելքն այդ պարագայում վազելն է», - ծիծաղելով ասում է նա: չ՞-ն նկարել չգիտի, իսկ Երեւանի պատերին աշխատում է տրաֆարետներով: Ամէն ինչ նախապէս ստեղծում է համակարգչով, տպում, կտրում պատկերացնում ինչ տեսք կունենայ գրաֆիտն եւ յետոյ նոր նկարը յանձնում պատին: Չնայած վիրտուալ աշխարհի ընձեռած հնարաւորութիւններին, գրաֆիտը պահպանում է իր արդիականութիւնն ու կիրառելիութիւնը: «Սոցիալական կայքում կարող ես 5000 ընկեր ունենալ, բայց քաղաքի պատերն ու նրանց վրայի հաղորդագրութիւններն իրենց ծաւալի ու զոյնների մէջ ազդեցիկ են, քան ցանկացած նկար ու երկտող, որ կը ներբեռնես ինտերնե-



տուն»,- վստահեցնում է չ՞-ն:

Գրաֆիտի գրողի համար ամենամեծ անարգանքը իր աշխատանքի վրայ մեկ այլ գրողի կողմից արևած նկարն է: Եական չէ, որտե՞ղ եւ ի՞նչ է ցանկանում նկարել գրաֆիստը, մա պարտաւորում է հետեւել փողոցային արւեստի չգուած սկզբունքներին եւ օրէնքներին. չնկարել մշակութային արժէք ներկայացնող կառոյցների եւ կրօնական հաստատութիւնների շէնքերի, ինչպէս նաեւ միմեանց աշխատանքների վրայ: 2՞-ն սրտացաւութեամբ է նշում, որ իր աշխատանքներից մէկի վրայ սմայլիկ եւն նկարել, փոխելով պատկերի իմաստն ու տրամադրութիւնը իսկ միւսի վրայ՝ պարզապէս չուզողաբար խզբզել:

«Ռմբակոծւած գւացքը»

Գրաֆիտի գրողները բաժանուում են երկու խմբի՝ «բոմբերներ» եւ «սթայլերներ»: Առաջիններն աշխատում են մեծ խմբով եւ կարծ ժամանակում: Կարող են հաւաքւել հինգ հոգով, հինգ ըրպէտն նկարել, ասենք, մի քանի պատերի վրայ եւ ցրել, իսկ սթայլերները կարելուում են գրաֆիտի բարձրորակութիւնը, ամէն ստեղծագործութեան վրայ աշխատում են քանի ժամ: Բոմբերների գործունէութեան ամենաթարմ օրինակը Երեւանի մետրոպոլիտենի գնացքի վագոնների նկարազարդումն էր: Այս ակցիան ոչ միանշանակ ընդունւեց երեւանցիների կողմից(պատճառներից մէկը գրաֆիտիների թոյլ կատարումն էր), իսկ գնացքը դեպոյում պարզապէս մաքրեցին եւ կրկին գործի ուղարկեցին...

Արգելած պտուղ

Ինչպէս աւանդական արւեստում, գրաֆիտիին էլ յատուկ են ընդհանուր ոճերը: N.M.E Crew-ի տղաների կարծիքով անհատական ոճ գտնելու համար նախ անհրաժեշտ է լաւ ուսումնասիրել տարբեր հեղինակների գործերը, դառնալ գիտակ եւ ստեղծել սեփականը: Բայց, ի տարբերութիւն աւանդական արւեստի, այստեղ չկան ուսուցիչներ, ովքեր կը սովորեցնեն

ինչպէ՞ս քաշել գծերն ու պահպանել ճիշտ չափսերը: Կարելու են մարդու ներքին ազատութիւնն ու երեւակայութիւնը: Գրաֆիտիի բացառիկութիւնը ինքնուրոյն զարգացման մէջ է, առանց միջամտութեան: Գրաֆիտիստները անընդհատ մրցակցութեան մէջ են՝ թէ ո՞վ և որտե՞ղ կը կարողանայ գրել, ո՞վ ի՞նչ նորարարութեամբ ու իւրայատկութեամբ կը կարողանայ զարմացնել: Արդիւնքում փողոցային արւեստը զարգանում է աւելի ու աւելի արագ:

Գրաֆիտիի առանձնայատկութիւնների շարքից է նրա անօրինական լինելը: Բազմաթիւ քաղաքներում առանց թոյլտւութեան քաղաքի պատերին նկարելը համարում է օրէնքի խախտում: Գրաֆիտի գրողների մեկնաբանութեամբ սակայն, հէնց այս անթոյլատրելիութեան մէջ է ողջ էքստրիմն ու հաճոյքը: Նրանք չեն ցանկանում ստեղծագործել մի քաղաքում, որտեղ գրաֆիտի կարելի է գրել որտեղ ու երբ ցանկանաս: Այս իմաստով գրաֆիտին պայքար է այն գրողների եւ ջնջողների միջեւ: «Որքան էլ ջնջեն, միեւնոյն է գրողը չի յանձնուում», - ասում են N.M.E Crew-ի անդամներն ու կատակում, - «աշխատում ենք այնպիսի գործեր անել, որ մարդու ձեռք չգնայ ջնջելու»: Գրաֆիտին առաւել արժեւորում է, երբ այն տեսանելի վայրում է արւած եւ առանց որեւէ թոյլտւութեան:

N.M.E Crew-ի անդամները ունեն օրինական գործեր, որոնք պատւիրւել ու թոյլ են տրւել Երեւանի քաղաքապետարանի կողմից, սակայն տղաները դրանք չեն դասում իրենց ամենաստացւած աշխատանքների շարքին: Բացատրում են, որ թոյլատրելիութիւնը ազդում է գրաֆիտիի որակի ու տեսքի վրայ: Չնայած ցանկանում են Երեւանի պատերը դարձեալ գրաֆիտիի թանգարան բաց երկնքի տակ, բայց համաձայնում են, որ յաճախ ոմանք չափն անցնում են ու նկարում այնպիսի պատերի վրայ, որոնք քաղաքի ներկայանալի դիմագիծն են:

Քաղաքային իշխանութիւնների հետ համաձայնեցւած գրաֆիտների թւում են վայրի բնութեան եւ մշա-





կութային արժեքների պահպանման հիմնադրամի ձեռնարկած «Իմ երազանքների քաղաք» խորագրով նկարները: Բնապահպանական խնդիրների մասին բարձրաձայնող այս գործերը հանգուանել են մայրաքաղաքի մի շարք լքած ու բանուկ դալաններում, որտեղ երիտասարդ նկարիչները պատկերել են իրենց երազանքների Երեւանը:

